community

The New Apostolic Church around the world

02/2015/AM

Շրջանային առաքյալների ժողովը Ցյուրիխում

Սրտով, հոգով և բանականությամբ

Հիսուսի անունով խնդրել – ժամերգություն Դոդոմայում

New Apostolic Church
International

Ուրախություն Քրիստոսով

Իմ սիրելի հավատքի եղբայրներ ու քույրեր ամբողջ աշխարհի,

Իմ սիրելի հավատքի եղբայրներ ու քույրեր ամբողջ աշխարհի,

արդեն մի քանի ամիս է անցել 2015 թվականից: Դուք ունեցել եք երջանկություն և դժբախտություն, տառապանք և տխրություն, ուրախություն և վստահություն: Երբ ես տարեսկզբին տվեցի այս տարվա նշանաբանը ՝ ,, ուրախություն Քրիստոսով ,, , բոլորովին չէի մտածել, որ այս խոսքը բազմանշանակ է: Հավանաբար շատերը նկատի են ունենում իրենց երկրային երջանկությունը: Ո՞վ չի ամբողջ սրտով ուրախանում դրա համար: Սակայն, կարող ենք այս նշանաբանի ներքո շատ ավելին հասկանալ. ուրախություն ժամերգությամբ, ուրախություն մեղքերի քավության համար, ուրախություն Սուրբ Ընթրիքի համար: Արդյո՞ք մենք չենք ապրել բոլոր այս գեղեցիկ պահերը միասնաբար, համաձայնությամբ ու օժանդակությամբ:

Ես վստահ եմ , որ տարվա մեր այս նշանաբանը կշարունակի գործել: Այն ավելին է, քան ասված այդ մեկ արտահայտությունը:

Հաճույքով կցանկանայի ձեզ մի քանի միտք ներկայացնել, որոնք պաշտպանում են այս տարվա ,, ուրախություն Քրիստոսով ,, նշանաբանը :

- Մեր սիրտը իրավունք ունի ուրախանալ, որ մենք Աստծո զավակների այսպիսի գեղեցիկ միություն ունենք: Մենք մասնիկն ենք մի համայնքի – Աստված մեզ չի թողնում միայնակ գնալ մեր հավատի ճանապարհով :

ՆԱԵ միջազգային

- Տեր Հիսուսը սիրում է մեզ և մեզ համար զոհաբերվեց: Մեր մեղքերը ներվեցին և Նա մեզ հրավիրեց իր սեղանին, որպեսզի Նրա հետ միաբանվենք: Յուրաքանչյուր ժամերգության ընթացքում մենք ապրում ենք Նրա ներկայությունը: Նա հայտնվում է մեր շուրջը:
- Տերը ուզում է կրկին գալ: Նա դա խոստացել է և իրականացնելու է : Մի՞թե դա ընդհանուր առմամբ մեր մեծ ուրախությունը չէ : Նա գալու է , որ իր հարսնացուական համայնքին դեպի տուն առաջնորդի: Եվ մենք իրավունք ունենք Նրան սպասելու:

Ասացեք ինքներդ, դա հրաշալի չէ՞:

Դրա համար մենք միասին ուրախանում ենք: Ես հիշեցնում եմ 103,2 սաղմոսի խոսքը.,, եվ մի մոռացիր բոլոր պարգևները նրա,, :

Ես ձեզ ցանկանում եմ ուրախալի ժամանակ:

Ձեր ՝ Ժան – Լյուք Շնայդեր

Խնդրել Հիսուսի անունով

Photo: NAC Ostafrika

Երեխաները ողջունում են գլխավոր առաքյալ Շնայդերին և առաքյալներին 2015թ. ապրիլի 19 – ի ժամերգությունից առաջ՝ Դոդոմայում. Տանզանիա

Հովհաննես 14.14

,, Ինչ որ դուք խնդրեք իմ անունով, ես դա կանեմ,,:

Սիրելի եղբայրներ և քույրեր, սիրելի հյուրեր, այսօրվա կիրակին առանձնահատուկ է Աստծո գործի համար այստեղ՝ Արևելյան Աֆրիկայում: Այստեղ են Աֆրիկայի բոլոր շրջանային առաքյալները, քանի որ ձեր շրջանային առաքյալը անցնում է հանգստի և նշանակվելու է նրան հաջորդողը: Ես վստահ եմ , որ եկեղեցու պատմության մեջ այստեղ՝ Արևելյան Աֆրիկայում վճռական օր է լինելու: Բայց մի մտահոգվեք, ընդամենը մի նոր սպասավոր է նշանակվելու: Վարպետը մնում է :Մենք՝ բոլորս էլ, լինենք գլխավոր առաքյալ, շրջանային առաքյալ թե առաքյալ, միայն Տիրոջ սպասավորներն ենք: Նա է վարպետը, մենք ծառայողներն ենք: Նոր շրջանային առաքյալն էլ է Տիրոջ սպասավորը, ինչպիսին էր մինչև հիմա:

Բայց ես մի ցանկություն էլ ունեմ, որ մեզնից յուրաքանչյուրը, ներառյալ և ես, այսօր մի վճռական քայլ անենք դեպի մեր հավատի նպատակը տանող ճանապարհին և ավելի մոտենանք Քրիստոսին: Մենք ուզում ենք այսօր մի մեծ քայլ անել դեպի Նա, Նրան նմանվել, որպեսզի Նրա կամքի համաձայն գործենք :

Աստվածաշնչի խոսքը, որը ես ձեզ համար կարդացի, բովանդակում է մի հրաշքի խոստում, Հիսուսն ասում է .,, Եվ ինչ որ ուզեք իմ անունով, այն կանեմ՝,,: Ապա պատկերացրեք , թե ինչ ցանկություններ կլինեն: Սակայն , հրաշքի կլիներ, որ Հիսուսին միայն խնդրեին, և նա ամեն ինչ կատարեր: Բայց Նա մի քանի նախապայման է դնում իր համաձայնության հիմքում: Նախ , մենք պետք է հավատանք , որ Նա Աստծո Որդին է , ոչ թե ինչ որ հրաշագործ կամ մի մեծ մարգարե , ով գեղեցիկ պատմություններ է պատմում, կամ որևէ մեկը, ով մեր խնդիրներն է լուծում:Մենք պետք է հավատանք, որ նա Աստծո Որդին է, ով երկիր իջավ, որպեսզի որպես Փրկիչ մարդկանց փրկություն և հավերժ կյանք բերի:

Երկրորդ պայմանն այն է , որ մենք Նրան իր անունով խնդրենք, այսինքն, Նրան այնպես խնդրենք, ինչպես Նա կաներ մեզ համար , եթե մեր տեղը լիներ: Եթե մենք պատասխան ենք ուզում մեր աղոթքների, ապա դրանք այնպես պետք է լինեն, ասես Հիսուսն ինքն է աղոթում: Նրան իր անունով խնդրել, նշանակում է , թե Հիսուսն է այդ խնդրանքը արտահայտում: Ամեն անգամ, երբ մարդիկ խնդրանքով Հիսուսի մոտ էին գալիս, նրան պարզ էր դառնում, որ նրանք ոչ բավարար հավատ ունեն, կամ էլ Նա համաձայն չէր խնդրանքին, հրաժարվում էր խնդրանքը կատարել: Մի անգամ փարիսեցիները եկան Նրա մոտ և պահանջեցին մի նշան.,, Վարդապետ, մենք կուզենայինք քեզնից մի նշան տեսնել,,՝; Նա պատասխանում է .,, Չար և շնացող ազգը նշան է փնտրում. այլ նշան չի տրվի նրան, բայց միայն Հոփսան մարգարեի նշանը, որովհետև ինչպես Հոփսանը երեք օր ու երեք գիշեր կետի փորի մեջ էր, նույնպես և մարդու Որդին երկրի ընդերքում,,: Դա հստակ մի պատասխան էր: Դուք պետք է հարությանը հավատաք,այլ ուրիշ նշան դուք չեք ստանա:

> Տիրոջ համար հավերժական կյանքը միշտ ավելի կարևոր է , քան երկրային ամեն ինչը; Ուստի իմաստ չունի Նրան խնդրել առաջնայնությունները փոփոխելու համար:

Սիրելի եղբայրներ և քույրեր, մենք պետք է հավատանք Աստծո Որդուն: Մենք պետք է մեր Փրկչին հավատանք , ու հավատանք, որ Նա իր կյանքը տվել է մեզ համար: Դա

Առաքյալներ և եպիսկոպոսներ զոհասեղանի մոտ

ապացույցն է մեր հանդեպ ունեցած Նրա սիրո: Մենք չենք կարող ամեն առավոտ Աստծոն դառնալ և ասել.,, Ախ, տուր մեզ մի նշան, որ մենք իմանանք, թե ինչ մեծ է Քո սերը մեր հանդեպ՝,,: Դա չի գործի, քանզի Հիսուսը իր սիրո ապացույցը վաղուց է տվել: Նա զոհաբերվել է մեզ համար:

Մենք նաև Հիսուսից չենք կարող պահանջել՝ ասելով.,, Ախ, տուր մեզ մի նշան, որ մենք պարզ հասկանանք, որ Քո գործը իսկապես փրկչական գործ է .. : պատկերացրեք, այստեղ՝ Դողոմայում, Աստված ինչ որ արտակարգ բան է անում, որպեսզի ապացուցի ու ասի . սրանք իմ զավակներն են, սա Աստծո գործն է , բայց Նա այդպես չի անում: Նա ասում է .,, Իմ զավակներն են այն բանի ապացույցը, որ սա Աստծո գործն է , քանի որ նրանց մեջ զարգանում է մի նոր արարած: Տեղի է ունենում հարության այլ ձև: Հին Ադամը մահանում է , և նոր արարածն է զարգանում և ավելի ու ավելի է տեսանելի դառնում: Մենք հավատում ենք Աստծո գործին, որովհետև մենք տեսնում ենք, թե ինչպես է զարգանում նոր արարածը:

Հիսուսը շատ օրինակներ է տվել: Դրանցից է տասը ֆունտերի մասին առակը: Մի ազնվական մարդ ուզում էր մի հեռու երկիր մեկնել և կանչում է իր տասը ծառաներին , նրանց տալիս է համապատասխանաբար տասը ֆունտ ու ասում.,, Շահարկեցեք դրանք, մինչև որ գամ՝,, : / Ղուկաս 19,13/ Երբ ազնվականը վերադառնում է , հաշվետվություն է պահանջում: Ծառաներից մեկը, ով առանց օգտագործելու պահել էր դրամը, արդարանում է և ասում.,, Ես վախենում էի քեզնից, որովհետև դու խիստ մարդ ես,, : Բայց Հիսուսը բացատրում է, որ առաջադրանք էր տրված և նա պետք է կատարեր այդ առաջադրանքը: Նա ուղղակի պետք է լսեր: Դրանով Հիսուսը մեզ ասում է .,, Ես Աստծո Որդին եմ, ուստի իմ խոսքերը չեն վերջանալու ,,:

> Եթե մենք Տիրոջը ամուր հավատի համար ենք խնդրում, Նա մեզ դա կնվիրի, քանի որ Նա ճիշտ այդ է աղոթում քեզ և ինձ համար:

Շատ մարդիկ այսօր էլ հաճույքով Հիսուսին կխնդրեին.,, Ախ, չես կարող դու Քո ավետարանը փոխել; Դրա

Վերևում ձախ՝ շրջանային առաքյալ Շադրեք Լուբազին զոհասեղանի մոտ՝ ժամերգության ժամանակ

վերաբերյալ ես կասկածներ ունեմ: Ուշադրություն դարձրու այսօրվա ժամանակներին, մեր երկրի իրադարձություններին,,: Բայց Հիսուսը դա չի անում: Ով հավատում է , որ Նա Աստծո Որդին է , գիտի, որ այն, ինչ Նա ասում է , հավերժ ճշայուն է :Նա մեզ համար իր ավետիսը չի փոխի, դրա համար կարիք չկա Նրան խնդրելու:

Կա էլի մի բան, որի համար մենք չենք կարող Հիսուսին խնդրել, որովհետև այն չի համապատասխանում նրա գաղափարին: Մենք չենք կարող Նրան խնդրել մեղսավորին պատժել: Մի անգամ աշակերտները դա փորձեցին . ,, Տեր , կամենում ես, որ ասենք և երկնքից կրակ իջնի ու բնաջինջ անի նրանց,,: / Ղուկաս 9.54/ Հիսուսը նրանց կարգի հրավիրեց: Մի ուրիշ անգամ մի կին բերեցին Նրա մոտ . ,, Հանցանքի մեջ բռնված այս կինը հայտնապես շնացել է , նրան պետքէ քարկոծել,,:

Հիսուսը խուսափում է պատժից, քանի որ այդ գաղափարը իրենը չէ: Հիսուսը Փրկիչ է : Նա ուզում է մեղավորին փրկել և ոչ թե՝ պատժել:

Կարիք չկա Հիսուսին նաև խնդրել, կիսված կամ երերուն սիրտը օրհնելու : Նա Աստծո Որդին է և ուզում է ամբողջական սիրտ: Լեռան քարոզում Նա ասում է , որ վերջում շատերն են խնդրելու երկնային թագավորության դռան առաջ՝ մուտք գործելու համար . ,, Այն օրը շատերն ինձ պիտի ասեն.,,Տեր,Տեր,չէ՞ որ քո անունով մարգարեացանք և քո անունով դևեր հանեցինք , և քո անունով բազում զորավոր գործեր արինք,,:

Եվ այն ժամանակ ես պիտի ասեմ. հեռու կացեք դուք ինձանից ամենքդ,ես ձեզ երբեք չեմ ճանաչել,,:/ Մատթեոս 7,21-23/ Նա գիտեր, որ նրանց սրտերը կիսված են, թեև նրանք իր անունով մեծ գործեր են արել:

Մենք չենք կարող Հիսուսին օրհնանքի համար խնդրել, եթե մեր սիրտը կիսված է , եթե մենք հնազանդ չենք: Գիտեք, երբ մենք խնդիր ենք ունենում, կարող ենք Հիսուսին խնդրել մեզ օգնելու: Բայց մենք չենք կարող խնդիրը լուծել այն բանի համար, քանի որ մենք աշխարհի ստի հետ ենք կապված: Դա չի լինի: Տերը դա չի կարող օրհնել: Դրանով մենք Նրանից պահանջում ենք , որ օրհնի անհնազանդությունը: Մենք ուշադրություն չենք

դարձրել Նրա հետ միությանը, բայց սպասում ենք, որ Նա մեզ օգնի և օրհնի; Այդպես չի լինի:

Մի վերջին օրինակ էլ: Երբ Հիսուսը Մարիամի և Մարթայի մոտ էր, Մարիամը նստեց Նրա ոտքերի մոտ և ուշադիր լսում էր Նրան: Մարթան շատ զբաղված էր: Նա հարցնումէ Տիրոջը.,, Տեր , քեզ փույթ չէ՞, որ քույրս ինձ մենակ է թողել ծառայության գործի մեջ. արդ, ասա դրան , որ օգնի ինձ,,: Նա պատասխանեց և ասաց. ,, Մարիամը ընտրել է լավ մասը, որ նրանից չպիտի վերցվի ,, : / Ղուկաս 10,40,43/ Մենք չենք կարող սպասել, որ Հիսուսը մեր երկրային կյանքին ավելի շատ նշանակություն տա, քան՝ հավերժական կյանքին: Տիրոջ համար հավերժական կյանքը միշտ ավելի կարևոր է, քան՝ երկրայինը: Ուրեմն, իմաստ չունի Նրան խնդրել առաջնայնությունները փոփոխելու համար: Նա դա չի անի: Դուք տեսնում եք, որ որոշ երևույթների դեպքում անիմաստ է Հիսուսին խնդրելը. Նա դրանք չի փոխի, որովհետև դրանք վկայում են մեր հավատի պակասի մասին , իսկ դա չի համապատասխանում Նրա կամքին: Նա ուզում է, որ մենք հավատանք:

Ուրեմն, ի՞նչ կարող ենք մենք Նրանից խնդրել: Դա շատ պարզ է : Մենք խնդրում ենք նրանից այն, ինչ նա խնդրել է Հորից: Սիմոն Պետրոսին ասում է Նա .,, Բայց ես աղոթեցի քեզ համար, որպեսզի քո հավատը չպակասի ,, : / Ղուկաս 22,32/ Ուրեմն մենք կարող ենք Տիրոջը այն բանի համար խնդրել, որ մեր հավատը չդադարի, անկախ նրանից, թե ինչ կլինի, որ մենք հավատալ կարողանանք առանց նշանների, միայն Նրա խոսքին: Դա ուժեղ հավատ կլերի: Երբ մենք Տիրոջը ամուր հավատի համար խնդրենք, Նա դա մեզ կնվիրի, քանի որ նա ճիշտ դրա համար է աղոթում քեզ և ինձ համար:

> Ես կցանկանայի, որ յուրաքանչյուրը ամեն մի համայնքում աղոթեր. ,, Հայր, այնպես արա, որ միասնական լինենք, անկախ ամեն ինչից,,:

Մենք կարող ենք Հիսուսի անունով աղոթել . ,, Տեր, թող Քո կամքը լինի ,, : Ես գիտեմ , որ դա հեշտ չէ, քանի որ հաճախ սխալ պատկերացում ենք ունենում Աստծո կամքի մասին: Մենք կարծում ենք, որ Աստծո կամքն է, որ մենք տառապենք, հիվանդ լինենք, մահանանք: Դա բոլորովի ճիշտ չէ: Աստված չի ուզում , որ մենք տառապենք, որ մեզ հետ անարդարացի լինեն; Աստված ուզում է , որ մենք տառապանքի պահին էլ հավատարիմ մնանք:

Հիսուս հաստատ գիտեր, թե ինչն էր իր Հոր կամքը . ,, Ես պետք է այս ճանապարհը գնամ, բայց Աստված ուզում է , որ ես իրեն հավատարիմ մնամ մինչև վերջ, Դա Նրա Հոր կամքն էր: Երբ Հիսուսն ասաց . ,, Թող Քո կամքը լինի, ոչ թե իմը,, Նա հաստատ գիտեր. ,, Իմ Հայրը չի

Գլխավոր առաքյալ Ժան – Լյուք Շնայդերը ձեռնադրում է Յոզեֆ Եխուային որպես շրջանային առաքյալ, ետևում՝ շրջանային առաքյալ Պատրիկ Մխվանացին / Հարավային Աֆրիկա/ և շրջանային առաքյալ Միքայել Դեպները / Կոնգոյի ԴՀ /

Շնորհակալություն շրջանային առաքյալներին. Ձածից աջ՝ շրջանային առաքյալ Նոյել Բարնես/ Քեյփ / , շրջանային առաքյալ / հանգստի անցած / Շադրեք Լուբազի / Արևելյան Աֆրիկա/, գլխավոր առաքյալ Ժան – Լյուք Շնայդեր

ուզում իմ տառապանքը տեսնել. Նա միայն ուզում է, որ ես մինչև վերջ հնազանդ մնամ: Դա Նրա կամքն է: Դա պետք է կատարվի . ,, Եվ երբ մենք նույնն ենք աղոթում՝ ասելով՝ Հայր, թող Քո կամքը լինի, նշանակում է, որ ես որոշել եմ հավատարիմ մնալ, անկախ նրանից, թե ինչ կլինի: Այդ դեպքում Հիսուսը մեզ կօգնի:

Հիսուսի անունով ինչ որ բան խնդրել, նշանակում է նաև, Նրանից ողորմածություն խնդրել, և դա այնպես անել, ինչպես Նա է մեզնից սպասում: Նա շատ հստակ դրա մասին ասել է, թե ինչ է անհրաժեշտ ողորմածության արժանանալու համար, այն է՝ լինել ողջախոհ, պատրաստ ապաշխարության և մերձավորին ներելու: Դա է Քրիստոսի Ավետարանը, և , եթե մենք դրան հետևենք և Նրանից ողորմածություն խնդրենք, Նա մեզ այն կնվիրի:

Առաքյալը անգամ ասել է , որ Հիսուսը երկինք է գնացել և Հորը խնդրել, որ մեզ ների. ,, Եթե մեկը մեղանչի, Աստծո առաջ բարեխոս ունենք Հիսուս բ Քրիստոսին՝ Արդարին և Անարատին ,, : / 1. Հովհաննես 2.1 / Նա երկնքում է և բարեխոս է մեզ համար: Եվ , եթե մենք ապաշխարության պատրաստակամ , ողջախոհ և ներողամտաբար ողորմածություն խնդրենք, Նա մեզ դա կնվիրի: Նա դա ևս խնդրում է մեզ համար:

Մեկ այլ դրվագում Հիսուսը Հորը աղոթքով խնդրում է իր առաքյալների միասնության համար և բոլոր նրանց համար, ովքեր նրանց շնորհիվ հավատում են Իրեն: Դրանով Նա աղոթում է նաև մեզ համար: Մենք նրանք ենք, ովքեր հավատում են Հիսուս Քրիստոսին՝ առաքյալների շնորհիվ: Եվ Նա աղոթում է իր ժողովրդի միասնության համար: Ես կցանկանայի, որ յուրաքանչյուրը ամեն մի համայնքում աղոթեր .,, Հայր, այնպես արա, որ մենք միասնական լինենք, անկախ նրանից, թե ինչ կլինի ,, : Երբ մենք լրջորեն համայնք ոտք դնենք միասնականության համար, Հիսուսը դա մեզ կնվիրի, քանզի նա ճիշտ նույն բանն է խնդրում:

Երբ մենք Նրան խնդրում ենք՝ ասելով . ,, Կարճեցրու ժամանակը և շուտ արի ,, , Նա կիրականացնի այդ խնդրանքը, քանի որ Նա ճիշտ այդ նույն բանի համար է խնդրում:

Դուք տեսնում եք, այս հինգ կետերով մենք նշեցինք, որ մենք միշտ աղոթում ենք Հիսուսի անունով: Նա դրան կպատասխանի: Նա այդ կիրականացնի: Եթե մենք Նրան այն բանի համար աղոթենք, որ մեր հավատը ուժեղացնի, Նա դա կանի: Եթե մենք այն բանի համար աղոթենք, որ հնազանդ ու հավատարիմ մնանք, ինչ էլ որ լինի, Նա դա կանի: Եթե մենք Նրանից ողորմածություն խնդրենք, նա դա կտա: Բայց մենք պետք է Նրա անունով ողորմածություն խնդրենք, այսինքն՝ Նրա պայմանները պետք է ընդունենք;

Եթե մենք միասնականության համար խնդրենք, քանի որ այդպես ենք ուզում, Նա դա մեզ կնվիրի, քանի որ Նա ևս այդ է տենչում : Եթե մենք ժամանակի կրճատման համար աղոթենք, ասելով՝ Տեր , շուտ արի, Նա կգա, Նա ևս դա է ուզում:

Հիմնական մտքերը

Հիսուսը լսում է խնդրանքները, որոնց հետ Նա կարող է համաձայնել

Մեր աղոթքները պետք է հիմնված լինեն Հիսուս Քրիստոսին հավատալու վրա և համապատասխանեն Տիրոջ կամքին: Աստված լսում է աղոթողին, ով ձգտում է ուժեղ հավատի, փորձության պահին համառ է, ձգտում է ողորմածության, միասնության և առաջին հարությանը;

Որպեսզի մեր խնդրանքները լսվեն, պետք է դրանք հիմնված լինեն Հիսուս Քրիստոսին հավատալու վրա և Նրա անունով խնդրվեն, որը և նշանակում է համաձայնել Նրա կամքին:

Տերը հագեցնում է սովյալներին

2014-ի դեկտեմբերին իր ասիական վերջին ճամբորդության ժամանակ գլխավոր առաքյալ Շնայդերը ժամերգություն անցկացրեց Մակաթիի համայնքի եղբայրների և քույրերի համար: Ավելի քան 40.000 նորառաքելական քրիստոնյաներ ապրում են Ֆիլիպիններում, և այնտեղ նրանց հոգևոր ծառայություն են մատուցում շրջանայիրն առաքյալ Ուրս Հեբազենը և 1.500 այլ ծառայող եղբայրներ:

Քաղցը մեր մարմնի ազդանշանն է: Այն տեղեկացնում է այն պակասի մասին,որը սննդի ընդունման դեպքում վերանում է: Աստվածաշնչյան իմաստով հոգու հոգևոր քաղցը արտահայտում է հոգու կարիքը, որը հագենում է աստվածային շնորհները ընդունելիս:

Մեր հոգին կարիք ունի մխիթարության: Հրեշտակը Մարիամին հայտնում է, որ նա ծնելու է Աստծո որդուն, ով հավերժ իշխելու է: Այնուամենայնիվ, նա Նրան լույս աշխարհ է բերելու գոմում և Նրան դնելու է գոմի մսուրում: Նրան գտնելու համար Աստված հայտնվում է ոչ թե անմիջապես, այլ Նա նրա մոտ է ուղարկում հովիվներին, ովքեր հաստատում են խոստացվածը: Աստված մեզ իր զավակներն է դարձնում և խոստանում, որ մենք ղեկավարելու ենք Հիսուսի հետ: Սակայն Նա մեզ չի պաշտպանում բոլոր դժբախտություններից: Նա մխիթարում է մեզ նրանով, որ ուղարկում է իր սպասավորներին, ովքեր հաստատում են Նրա խոստումը:

Աճել հավատքով, ողորմածությամբ և ճանաչողությամբ

Մեզ անհարժեշտ է հավատով ուժեղանալ: Ճշմարիտ հավատը կայանում է ոչ թե նրանում, որ հավատում են խոսքի ճշմարտությանը, այլ որ այն կյանքի ենք կոչում: Ո՞վ կարող է մեզնից հաստատել, որ ինքը միշտ այդպես կանի: Մենք չպետք է վարանենք Տիրոջն ասել,, Ես հավատում եմ, օգնիր իմ անհավատությանը,,: /Մարկոս 9,24/ Նա ուզում է մեր հավատն ուժեղացնել:

Մենք կարիք ունենք ողորմածության: Ձկնորսության ժամանակ Պետրոսը գիտակցում էր այն տարածությունը, որը նրան բաժանում էր Հիսուսի մեծությունից /Ղուկաս 5,8/ Աստված մեզ համար սիրող հայր է, իսկ Հիսուսը՝ մեր եղբայրը: Այս առումով մենք չպետք է նրանց մեծությունն ու փառահեղությունը մեր տեսադաշտից կորցնենք: Որպեսզի մենք Նրանց մոտենանք, կարիք ունենք ողորմածության: Աստված դեմ է ամբարտավաններին, բայց հեզերին շնորհներ է տալիս: /Հակոբոս 4,6/

Մենք պետք է աճենք նաև իմաստության և ճանաչողության մեջ: Այս խնդրանքը մենք ներառում ենք մեր աղոթքում և Մարիամի նման մտածելու ժամանակ ենք շահում: /Ղուկաս 2,19/ Աստված նրանց է իմաստություն տալիս, ովքեր այն խնդրում են Նրանից; / Հակոբոս 1,5/

Մեր հոգին պահանջ ունի Աստծո հետ միության: Մենք այն ապրում ենք Սուրբ Ընթրիքի ժամանակ, քանի որ մաքրված սրտեր ենք ունենում: Մենք այն կարող ենք նաև եղբայրական միասնության մեջ գտնել, եթե մենք պատրաստ լինենք մեր նախապաշարումները թողնել: Եթե մեր փրկության ձգտումը մեր աղոթքում արտահայտվի, Աստված այն կլսի; /Ղուկաս 18,7/

Հիմնական մտքերը

Ղուկաս 1,53

,,Քաղցածներին լիացրեց բարիքներով և մեծահարուստներին ձեռնունայն արձակեց,,:

Աստված լսում է նրանց, ովքեր Նրան ողջամտությամբ ով են խնդրում իրենց մխիթարել, իրենց հավատը ուժեղացնել, իրենց ողորմածություն ու իմաստություն նվիրել և ով իրենց դեպի միասնություն առաջնորդել:

ԱՅՑ ՄԱՐԹԻՆԱՅԻՆ ՍԱՆՏԻԱԳՈ ԴԵ ՉԻԼԻ

Լուսանկարները՝ մասնավոր

Իմ անունը Մարթինա է: Ես ծնվել եմ Արգենտինայում, սակայն 20 օրականից ապրում եմ Չիլիում: Այժմ ես տասնմեկ տարեկան եմ և ապրում եմ Սանտիագո դե Չիլիում, մեր երկրի մայրաքաղաքում:

Իմ ընտանիքին են պատկանում մայրս՝ Էվելինան, հայրս՝ Կառլոսը և իմ քույր Լուսիանան

Մեր ընտանիքին է պատկանում նաև մեր շուն Լեոն, որի անունը առյուծ բառի իսպաներեն տարբերակն է: Իմ ազատ ժամանակ ես հաճույքով լսում եմ երաժշտություն: Հորինում եմ պարային շարժումներ և ով տարբեր զգեստներ եմ փորձում:

Լուսիանան և ես հաճախում ենք նույն դպրոցը: Լուսիանան սովորում է երրորդ դասարանում, իսկ ես՝ հինգերորդ: Լուսանկարն արված է դպրոցի բակում: Այդ ժամանակ մենք մասնակցում էինք ավանդական պարերի ներկայացմանը:

Մենք հաճախում ենք Չիլիի կենտրոնական եկեղեցին: Այն կառուցվել է ավելի քան 100 տարի առաջ և վերջերս է վերանորոգվել:

Համայնքը կոչվում է Մարին: Հայրս այնտեղ ծառայում է որպես քարոզիչ: Լուսիանան հաճախում է կիրակնօրյա դպրոց, իսկ ես՝ կրոնական պարապմունքների, որն անց է կացնում իմ տատիկ Միլին:

Մայրս օգնում է կրոնական պարապմունքներին, իսկ ես նրան օգնում եմ ծաղիկներով զարդարելու գործում: Ինձ դուր է գալիս

/ՉԻԼԻ/ ՈՎ

զոհասեղանը ծաղիկներով գեղեցկացնելը: Կիրակի օրերը ժամերգությունից հետո մենք օրն անց ենք կացնում իմ տատիկի, պապիկի, մորաքույրերի, հորեղբայրների և զարմիկների հետ:

Մեր ընտանիքի հետ միասին մենք ևս տոնում ենք

Անկախության տոնը: Այստեղ դուք տեսնում եք Լուսիանայինն և ինձ կառավարական շենքի մոտ՝ երկրի մի մեծ դրոշի առաջ: Սեպտեմբերի 18-ից մինչև 21-ը Չիլիում տոնակատարություն է՝ խաղերով, պարերով և նաև շատ ուտելով:

Փոստարկղ

ԵՐԲԵՄՆ ՄԵԿ ՈՒՐԻՇԻ ԻՑ ՀԻԱՍԹԱՓՎՈՒՄ ԵՆ՝ԱՅՆՊԵՍ, ՈՐ ՍԻՐՈՎ ԿՑԱՆԿԱՆԱՅԻՆ ԹՈՂՆԵԼ Ը: ԴՈՒՔ ՁԵՐ ՓՈՐՁԻՑ ԵՔ ՏԵՂԵԿԱՑՐԵԼ:

,,Հա-հա, ինչ ուրախալի է..- , Ի՞նչ են դրանք պատմում,:- Հիմա նա իրեն լքված է զգում և վազում է իր ամենալավ ընկերուհի Սոֆիայի մոտ: Քանի որ նա նման բան երբեք չի անի.,Արագ Սոֆիայի մոտ: Հեկեկանք,,:
Կոսիմա, 10 տարեկան, Լայփցիգից

,,Իմ մայրը ինձ տարավ խանութ, որտեղից նա ուզում էր ինձ համար պայուսակ գնել; Սակայն, երբ մենք այնտեղ էինք, բոլոր պայուսակները շատ թանկ էին: Ես շատ տխուր էի և հիասթափված: Բայց ես կարող էի ինձ համար հոտավետ մատիտներ գնել, ու ես կրկին երջանիկ էի..:
Էրին,9 տարեկան, Փերթից / Ավստրալիա /

,,Իմ ընկերներից մեկն ինձ խոստացավ, որ ինձ մի այնպեսի բան կնվիրի, որը ինձ շատ դուր կգա: Բայց նա այն ինձ այդպես էլ չտվեց: Ես այլևս չէի ուզում նրան տեսնել, ես այնպես զայրացած էի: Բայց ես ժամերգությունը լավ լսեցի և հասկացա, որ Աստված չի ցանկանա, որ ես ինձ այդպես պահեմ,,:
Լյուք-Օլիվեր,12 տարեկան, Պորտո-Նովոյից / Բենին/

Լուսանկար միջազգային ԱՄԵ

2015 թ. սեպտեմբերին լույս է տեսնելու ,, Նորառաքելական եկեղեցու դավանաբանությունը հարցերում և պատասխաններում ,, գիրքը: Ընդհանուր առմամբ 750 հարցերից և պատասխաններից Community – ին / քըմյունիթին / առանձնացրել է մի քանի հարցեր և պատասխաններ : Այս հրատարակության մեջ խոսքը գնում է դավանաբանության և Սուրբ Երրորդություն Աստծո մասին:

Ի՞նչ է դավանանքը :
Դավանանքը հավատքային ուսմունքի բովանդակության էական ամփոփումն է : Դավանաբանության մեջ է կայանում այն, թե ինչ նպատակի համար են հավատքի միության անդամները այդ հավատքը ճանաչում : Դրա շնորհիվ մեկ դավանանքի դավանաբանությունը տարբերվում է մյուսներից:

Ինչպես են ձևավորվել առաջին քրիստոնեական դավանանքները:
Առաջին քրիստոնեական դավանանքները անվանվել են ,, վաղ եկեղեցական դավանաբանություններ,,: Դրանք ձևավորվել են Քրիստոսից առաջ երկրորդից չորրորդ դարերում: Այդ ժամանակ ձևավորվել է Սուրբ Երրորդություն Աստծո և Հիսուս Քրիստոսի էության, այսինքն՝ Նրա բնության մասին ուսմունքը : Դա անհրաժեշտ էր , քանի որ կային վիճաբանություններ հավատքի բովանդակության շուրջ: Օրինակ, կարծիք կար, որ իրականում Հիսուս Քրիստոսը խաչի վրա չի մահացել և , որ Նա իրականում հարություն չի առել: Դավանաբանության շնորհիվ այս սխալ ուսմունքից հրաժարվել են:

Որո՞նք են վաղ եկեղեցական կարևոր դավանաբանությունները:
Վաղ եկեղեցական երկու կարևոր դավանաբանություններն են՝ առաքելական դավանաբանությունը / ,, առաքելություն,,/ և Նիկիա –Կոնստանդնուպոլսի դավանաբանությունը: Առաքելականը հիրհիմական սկզբունքները կազմավորել է երկրորդ դարում և լրացրել չորրորդ դարում: Նիկիա – Կոնստանդնուպոլսի դավանաբանությունը Նիկիայի /Ք.հ. 325 թ/ և Կոնստանդնուպոլսի/ Ք. Հ. 381 թ./ եկեղեցական ժողովների արդյունքում է ձևավորվել / : Այս դավանաբանությունը ամենից առաջ ամրագրել է Աստծո Սուրբ Երրորդությունը;

Եկեղեցական ժողովը բարձրաստիճան հոգևոր անձանց ժողով է , որը տեղի է ունենում հավատի կարևոր հարցեր քննարկելու նպատակով:

Ի՞նչ նշանակություն ունեն վաղ քրիստոնեական դավանաբանությունները Նորառաքելական եկեղեցու համար:
Նորառաքելական ուսմունքը հիմվում է Սուրբ գրքի վրա: Վաղ եկեղեցական դավանաբանությունները հանրագումարի է բերում էական բովանդակությունները, որոնք վկայվում են Սուրբ գրքում:

Նորառաքելական եկեղեցին ճանաչում է վաղ եկեղեցական երկու դավանաբանություններում ձևակերպված հավատը .այն է՝ ճանաչում է

Երրորդություն Աստծուն, Հիսուս Քրիստոսին՝ որպես ճշմարիտ Աստված և ճշմարիտ մարդ, Հիսուսի ծնունդին սուրբ կույս Մարիամից , Սուրբ Հոգու առաքելությանը, եկեղեցուն, Հաղորդությանը, Քրիստոսի գալստյանը և մեռելների հարությանը:

Չնայած առանձին դավանանքների տարբերությանը, այս ճանաչումները ներկայացնում են այն սկզբունքը, որը միմյանց է կապում քիստոնյաներին:

,,Քոնֆեսիոն, բառը / բառացի ,, դավանաբանություն,, / նշանակում է հավատքի ճանաչողություն, պատկանելություն եկեղեցուն: ,,Քոնֆեսիոններ,, հասկացությունը նշանակում է նաև քրիստոնեական հավատքի տարբեր միություններ:

Ինչպե՞ս է հնչում Նորառաքելական հավատամքը:
„Ես հավատում եմ Աստծուն՝ Հորը, Ամենազորին, երկնքի և երկրի Արարչին;

Ես հավատում եմ Հիսուս Քրիստոսին, Աստծու միածին Որդուն, մեր Տիրոջը, ով Սուրբ Հոգով ծնվել է սուրբ կույս Մարիամից, տանջահար է արվել պոնտացի Պիղատոսի ժամանակ, խաչվել, մահացել, թաղվել, գնացել է մահվան թագավորություն, երրորդ օրը մահից հարություն է առել, համբարձվել երկինք; Նա նստած է Աստծո՝ Ամենազոր Հոր աջ կողմում, այդտեղից էլ Նա նորից գալու է :

Ես հավատում եմ Սուրբ Հոգուն, մեկ սուրբ ընդհանրական առաքելական եկեղեցուն, սրբերի միաբանությանը, մեղքերի քավությանը, մեռելների հարությանը և հավերժական կյանքին:

Ես հավատում եմ , որ Տեր Հիսուսը ղեկավարում է իր եկեղեցին և դրա համար էլ ուղարկել է իր առաքյալներին , և էլի է ուղարկելու մինչև իր գալուստը՝ այն առաջադրանքով, որ նրանք ուսուցանեն, իր անունով մեղքերին թողություն տան, մկրտեն սուրբ ջրով և կնքեն Սուրբ Հոգով:

Ես հավատում եմ Աստծո կողմից ծառայության համար ընտրվածներին , ովքեր ձեռնադրվում են առաքյալների կողմից և նրանցից ստանում են լիազորություն , օրհնանք և սրբություն իրենց ծառայության համար:

Ես հավատում եմ, որ սուրբ ջրով մկրտությունն առաջին քայլն է մարդու Սուրբ Հոգով նորացման, և որ դրանով մկրտվածը ընդունվում է այն համայնքը, որը հավատում է Հիսուս Քրիստոսին և ճանաչում Նրան որպես իր Տիրոջ:

Ես հավատում եմ, որ Սուրբ Ընթրիքը հիշատակն է մեկ անգամ կատարված, բայց հավերժ մնայուն Քրիստոսի զոհաբերության, տանջանքի և մահվան, որը հաստատվել է Տիրոջ կողմից: Սուրբ Հաղորդության արժանապատիվ ճաշակումը միաբանում է մեզ Հիսուս Քրիստոսի՝ մեր Տիրոջ հետ: Այն տոնվում է անթթխմոր հացով և անապակ գինով; Երկուսն էլ պետք է առաքյալի կողմից լիազորված սպասավորը կիսի և բաժանի:

Ես հավատում եմ , որ առաքյալի կողմից սուրբ ջրով մկրտվածը ընդունում է Սուրբ Հոգու պտուղները , որպեսզի դառնա Աստծո զավակ և ձեռք բերի առաջնեկության նախադրյալները :

Ես հավատում եմ, որ Հիսուսը նորից է գալու այնպես հաստատուն, ինչպես երկինք էր բարձրացել և իր հետ է տանելու ողջերի և մահացածների առաջնեկներին , ովքեր հուսացել են Նրա գալուստը և նախապատրաստվել, որ Նա երկնքի հարսանիքից հետո նրանց հետ վերադառնալու է երկիր, իր խաղաղության թագավորությունն է հաստատելու , և նրանք Նրա հետ ղեկավարելու են որպես թագավորական քահանաներ: Խաղաղության թագավորությունից հետո Նա անելու է Վերջին դատաստանը: Դրանից հետո Նա նոր երկինք ու նոր երկիր է ստեղծելու և ապրելու է իր ժողովրդի հետ:

Ես հավատում եմ , որ ես պարտավորված եմ աշխարհիկ իշխանություններին հնազանդվել այնքանով , որքանով որ չեմ հակառակվի աստվածային օրենքներին:

Ի՞նչ նշանակություն ունի Նորառաքելական դավանանքը:
Նորառաքելական դավանանքը տասը հոդվածներով ներկայացնում է Նորառաքելական եկեղեցու դավանաբանական ուսմունքը: Այն նաև նորառաքելական քրիստոնյաների հավատը պահպանելու խնդիր ունի: Այս առումով, դավանաբանությունը նպաստում է այլ մարդկանց ևս նարառաքելական հավատքի էական բովանդակությանը ծանոթացնելուն:

Վերնագիր
Հրատարակիչ՝ Ժան – Լյուք Շնայդեր
Իուբերլանդսթրասե 243.CH – 8051 Ցյուրիխ / Շվեյցարիա
Ֆրիդրիխ Բիշոֆ ՓԲ հրատարակչություն
Գուելոյթշթրասե 298, 60327 Մայնի Ֆրանկֆուրտ
Խմբագիր՝ Պեթեր Յոհանինգ

Լուսանկար՝ ՆԱԵ միջազգային

Երրորդություն Աստվածը

Ո՞վ է Երրորդություն Աստվածը:
Աստված հոգևոր, կատարյալ, լիովին անկախ Արարած է ; Նա հավերժական է ,անսկիզբ և անվերջ: Միակ Աստվածը Հայրն է , Որդին և Սուրբ Հոգին: Եթե խոսվում է Հոր , Որդու և Սուրբ Հոգու մասին , դա չի նշանակում , որ խոսքը երեք աստվածների մասին է, այլ՝ երեք անձանց, ովքեր մեկ Աստվածություն են:

Աստծո ի՞նչ էական հատկանիշներ ենք մենք ճանաչում:
Մարդիկ չեն կարող լիովին նկարագրել Աստծուն: Բայց մենք ճանաչում ենք Աստծո էական հատկանիշները՝ Նա միակն է , սուրբ է , ամենակարող է , հավերժական է , կենդանի է , ողորմած է , արդար է , կատարյալ է :

Ինչպիսի՞ հարաբերության մեջ են գտնվում Հայրը, Որդին և Սուրբ հոգին:
Հայրը, Որդին և Սուրևբ Հոգին երեք աստվածային անձերի անուններն են: Թեև Նրանք տարբերվում են միմյանցից, այնուամենայնիվ, Նրանք մեկ Աստված են: Քրիստոնեկան ավանդության մեջ երեք աստվածային անձինք դասակարգվել են հետևյալ կերպ. Հայր Աստվածը Արարիչն է երկնքի և երկրի, Որդի Աստվածը Փրկիչն է ,, ով մարդացավ և իր կյանքը զոհաբերեց մարդկության փրկության համար, Սուրբ Հոգի Աստվածը Նոր Արարաիչն է : Նա հոգում է այն բանի համար, որ Աստծո կողմից մարդկանց փրկությունը հնարավոր լինի և նոր արարածի ծնունդը մարդկանց մեջ լիակատար ավարտին հասցնի:

Ի՞նչ է նշանակում , հայր , հասկացությունը, երբ այն կիրառվում է Աստծո հետ կապված:
,Հայր, հասկացությունը կիրառվելով Աստծո հետ՝ ցույց է տալիս արարումը, հեղինակությունը և հոգացությունը: Աստված արարաիչ է և պահապանը իր կողմից ստեղծվածի; Դրա համար էլ, յուրաքանչյուր մարդ իրավունք ունի Աստծուն, ով իր արարաիչն է , , հայր , անվանել:

Ի՞նչ է պատմում արարչագործությունը Աստծո մասին:
Արարչագործությունը և նրա օրինաչափությունը վկայում են Աստծո ինաստությունը, որի մեծության մասին մարդը չի կարող պատկերացում ունենալ; Հիացած բացականչում է սաղմոսագիրը. ,,երկինքը պատմում է Աստծո փառքը և երկնքի հաստատությունը հայտնում է Նրա ձեռքի գործերը ,,:/ Սաղմոս 19,2/

Ի՞նչ ժամանակահատվածում է Աստված արարել աշխարհը:
Աստված աշխարհն արարել է վեց օրում: Արարման օրերը դա այն ժամանակահատվածն է , որի տևողությունը որոշակի չէ: Աստվածային արարման մեջ մեկ օրը հավասար չէ մեր պատկերացրած մեկ օրվան: Մովսեսի 1-ին գրքի 2;2 – ում այսպես է ասվում.,,Աստված օրհնեց յոթերորդ օրը և սրբագործեց այն, որովհետև այդ օրը Աստված հանգստացավ իր այն բոլոր գործերից, որ սկսել էր անել,,:

,,… Տիրոջ համար մեկ օրը՝ ինչպես հազար տարի է , և հազար տարին՝ ինչպես մեկ օր, : Պետրոս 2,3: 8/
,, Հազար տարին Տիրոջ աչքում երկու օրվա պես է , որ անցավ,,: ,Սաղմոս 90:4/

Արդյո՞ք Աստծո արաչագործությունն այն է , ինչ մարդը կարող է ըմբռնել իր մտքով:
Ոչ, կա նաև Աստծո անտեսանելի արարչագործություն; Դրա գաղտնիքները խուսափում են , ինչպես Աստվածն ինքը, մարդկային հետազոտությունից: Սուրբ գիրքը, բացի նյութական արարաչագործությունից , բովանդակում է վկայություններ ոլորտների, մուտքերի, վիճակների էությունների մասին,:

Սատանան էլ է՞ պատկանում անտեսանելի արարչագործության թվին:
Իսկզբանե սատանան եղել է հրեշտակ: Որպես այդպիսին նա պատկանել է անտեսանելի արարչագործությանը: Այդ հրեշտակը ըմբոստացել է Աստծու դեմ և դարձել է նրա հակառակորդն իր անհնազանդության , նախանձի և ստի պատճառով, հեռացել է Աստծո հետ միությունից:

,,Քանզի Աստված չխնայեց մեղանչած հրեշտակներին, այլ խավարի կապանքներով գցեց տարտարոսը /,,: Պետրոս 2, 2:4 /
,,Եվ այն հրեշտակներին, որ չպահեցին իրենց իշխանությունը, այլ լքեցին իրենց բնակության տեղը,

հավիտենական կապանքներով խավարի մեջ պահեց դատաստանի մեծ օրվա համար ,,:Հուդա 6/

Ո՞րն է հրեշտակների առաջադրանքը:
Հրեշտակների առաջադրանքն է Աստծուն երկրպագելը, նրա հանձնարարությունները կատարելը և դրանով նրան ծառայելը: Աստծո սերը մարդկանց հանդեպ երևում է նրանում, որ Նա հրեշտակներին թույլ է տալիս ծառայել մարդկանց: Որ , հատկապես , երեխաներն ունեն հրեշտակների պաշտպանություն , կարելի է Մատթևոսի 18:10-ից իմանալ:

,,Ես Ռաֆայելն եմ, յոթ հրեշտակներից մեկը, որոնք Տիրոջ առաջ են…Քանի որ Աստծո կամքով է, որ ես ձեզ մոտ եմ,դրա համար էլ գովաբանեք և փառաբանեք Նրան, : Թոբիաս 12:15,18/
,,Զգույշ եղեք, որ այս փոքրիկներից մեկին չարհամարհեք, ասում եմ ձեզ, որ երկնքում նրանց հրեշտակները մշտապես տեսնում են երեսն իմ Հոր, որ երկնքում է ,,:Մատթեոս 18,10

Պետք է՞ հրեշտակների էլ երկրպագել:
Ոչ, քանի որ հրեշտակները միշտ գործում են Աստծո կամքի համաձայն, դրա համար էլ անհրաժեշտություն չկա նրանց շնորհակալ լինել կամ փառաբանել, այլ՝ պետք է դա անել միայն Աստծուն:

,,Հրեշտակները բոլորն էլ սպասարկող հոգիներ են, որոնք ուղարկվում են ի սպասավորություն նրանց, որ ժառանգելու են փրկությունը,, : /Եբրայեցիներին 1:14/

Ինչու՞ պետքէ հետաքրքրվել անտեսանելիով:
Մարդը ոգու, հոգու և մարմնի միություն է / Թեսաղոնիկացիներին 1, 5:23 / Մարմինը մահկանացու է , պատկանում է Աստծո տեսանելի արաչագործությանը, ոգին և հոգին անմահ են , պատկանում են Աստծո անտեսանելի արարչագործությանը: Քանի որ հոգին և ոգին շարունակում են մահից հետո ապրել, կարևոր է անտեսանելիով էլ հետաքրքրվելը: Փրկությունը, որ մարդը Աստծուց է ստանում, իր ազդեցությունն ունի նաև անդրշիրմյան աշխարհում: Այս իմացությունը կարող է այն բանի հանգեցնել, որ սատանայի փորձություններին չենթարկվեն և աստվածահաճո կյանքով ապրեն: Մեր կյանքում անտեսանելիի նշանակությունը Պողոսը պարզաբանում է .,, որովհետև մեր թեթև նեղության առժամանակյա հաճախանքը մեր մեջ առաջ է բերում հավիտենական փառք, որ գերազանցում է ամեն ինչ, քանզի չենք նայում տեսանելի բաներին, այլ՝ անտեսանելիներին, որովհետև տեսանելիները ժամանակավոր են, իսկ անտեսանելիները՝ հավիտենական,,: / Կորնթացիներին 2:4.17,18/ Այսպես, անտեսանելիով հետաքրքրվելը մեզ օգնում է ավելի լավ կարգավորել կարողանալ այն ամենը, ինչ տեղի է ունենում մեզ հետ:

2015թ. սեպտեմբերին -ը որպես գիրք

Հավանաբար 2015 թ. սեպտեմբերի 1-ին լույս կտեսնի Նորառաքելական եկեղեցու դավանաբանությունը նոր տարբերակով: Դա որոշվել է շրջանային առաքյալների ժողովի վերջին նիստում: Աշխատությունը վերամշակվել է հարցերի և պատասխանների տեսքով:

Հինգ լեզուներով թարգմանությունները նույնպես պատրաստ կլինեն ըստ պլանի: Այժմ կատարվում են տպագրման նախապատրաստական սրբագրման աշխատանքները:

Միասնական սկիզբ՝ բազմաթիվ լեզուներով

Ընդհանրապես կարող էր ,, Դավանաբանությունը հարցերում և պատասխաններում,, գիրքը աստիճանաբար լույս տեսնել անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իսպաներեն և պորտուգալերեն լեզուներով: Սակայն շրջանային առաքյալների ժողովը որոշեց, որ տարբեր լեզուներով տարբերակները պետք է միաժամանակ լույս տեսնեն: Դրանով տրվեց այլ լեզուներով ևս թարգմանությունների մեկնարկը: Դրանց թվում էր ամենից առաջ Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետության տարածքային լեզուների մի շարք, քանի որ այնտեղ են ապրում ամբողջ աշխարհի եկեղեցու անդամների թվի մեկ երրորդը:

Որպես ուսումնական նյութ կիրառվելը

Եկեղեցու ղեկավարությունը կարևորեց Նորառաքելական եկեղեցու դավանաբանության նոր հրատարակումը դասավանդման նպատակով: Այդ նպատակով Դավանաբանության տեքստը բաշխվեց 750 հարցերում և պատասխաններում: Դա կատարվեց Նոր առաքելական հավատի նախագծող խմբի կողմից, որը գրեթե տասը տարի աշխատել է աշխատության հիմունքների վրա:

Հարցերի և պատասխանների սխեման քրիստոնեական դավանաբանության մեջ կիրառվել է հարյուրամյակներ ի վեր և Նորառաքելական եկեղեցում էլ երկար ավանդույթ ունի: Դրա հիմքում գտնվող դիդակտիկ մեթոդը բազմիցս փորձվել է :Այսպես՝ ,, Նորառաքելոց եկեղեցու դավանաբանությունը հարցերում և պատասխաններում,, գիրքը կկիրառվի որպես ուսումնական ձեռնարկ սպասավոր եղբայրների կողմից՝ երեխաների և երիտասարդության դասավանդման նպատակով:

Նախատեսում

05.07.2015	Սաարբրյուքեն / Գերմանիա /
12.07.2015	Գոմա / Կոնգոյի ԴՀ /
13.07.2015	Բուկավո / Կոնգոյի ԴՀ /
17.07.2015	Բանդունդու Վիլլա / Կոնգոյի ԴՀ /
19.07.2015	Քինշազա / Կոնգոյի ԴՀ /
02.08.2015	Գդանսկ / Լեհաստան /
29.08.2015	Վանաձոր / Հայաստան /
30.08.2015	Թբիլիսի / Վրաստան /
06.09.2015	Վիլլինգեն / Գերմանիա /
09.09.2015	Նոումեա / Ավստրալիա /
13.09.2015	Առքլանդ / Ավստրալիա /
27.09.2015	Դյուսսելդորֆ / Գերմանիա /

New Apostolic Church
International